մանէ որում շաղախեցաւ երկիր, և ազատեսցուք արք և կանայք մեր 'ի նախատանաց և դատերք մեր 'ի լկմանէ, ագարակք մեր 'ի կողոպտմանէ, ստացուածք մեր 'ի աւարայարմանէ, ազատութիւն մեր 'ի ծառայութենէ, հոգի և մարմին մեր 'ի խղճմտանաց և 'ի պատժոյ 'ի հանդերձելումն և այլն, նաև ներել զիս հայցեմ 'ի ընթերցողէդ զի ասացից նշաւակ մի ևս վասն հաստատելոյ բանն իմ զերազանց բարութեան Օրինաց, թէպէտ վկայութիւն բազում ունիմ վասն այս այլ ոչ կամիմ յերկարացուցանել խօսն իմ, և որպէս սովորութիւն է մեզ Քրիստոնէից երկու և երիս վկայիւք հաստատիլ ամենայն բան, նոյն գունակ սուաւ երկայնամիտ լեր ընթերցող զանազանութիւն գործոյն փոփոխական բնութեան մերոյ։ Ապգար թագաւոր Հայոց ըստ բարեպէս մտաց իւրոյ ընտրեաց վասն մխիթարութեան և փրկութեան հոգւոյ և մարմնոյ իւրոյ փրկութիւն 'ի վերայ աշխարհի և 'ի հանդերձելումն զկեանս յաւիտենականս 'ի անտեսութեամբ աչաց հաւատաց բարեգոյն Յիսուս Նազովրացի փրկիչն մեր Քրիստոս և 'ի աշակերտէ նորայ մկրտեցաւ ընտանեօք իշխանօք և անթիւ ժողովրդով 'ի յօրէնս Քրիստոսի, և դատաւ շնորհս հոգով և մարմնով այլ քեռ որդին նորայ Սանատրուկ թագաւոր Հայոց սպան Սուրբ առաքեալն Քրիստոսի Թադէոս այրն Աստուծոյ միևնոյն որ մկրտեաց